

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՏԴ 340:06  
ԳՄԴ 67  
Ե 540

**ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ  
ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ  
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ  
ԺՈՂՈՎԱԾՈՒ**

**ՆՎԻՐՎՈՒՄ Է Ա. ԵՍԱՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ  
100-ԱՄՅԱԿԻՆ**

**Հրատարակության է երաշխավորել  
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհուրդը  
Գլխավոր խմբագիր՝  
իրավ. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,  
պրոֆեսոր Գ.Ս. Ղազինյան**

**Խմբագրակազմ՝  
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Հ. Գաբուզյան  
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս.Ա. Դիլբանդյան  
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Գ. Վաղարշյան  
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ.Բ. Դանիելյան  
իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Վ.Դ. Ավետիսյան  
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Ս.Գ. Մեղրյան  
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Վ.Վ. Զոչարյան**

**Ե 540 ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսա-  
կան կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու/ ԵՊՀ; Գլխ. խմբ.՝  
Գ.Ս. Ղազինյան.– Եր.: ԵՊՀ, 2015.–208 էջ:**

Ժողովածուն ամփոփում է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում 2014թ. դեկտեմբերի 11-ին տեղի ունեցած գիտաժողովի նյութերը՝ նվիրված ականավոր իրավաբան Աղասի Եսայանի ծննդյան 100-ամյակին:

Այն ընդգրկում է իրավունքի գրեթե բոլոր ճյուղերի վերաբերյալ գիտական աշխատանքներ, որոնք աչքի են ընկնում բարձրացված հարցերի արդիանա-կությանը, տեսական խորը վերլուծություններով և գործնական նշանակու-թյամբ: Ժողովածուի մեջ տեղ են գտել ինչպես ճանաչված գիտնականների, այն-պես էլ երիտասարդ դասախոսների ու ասպիրանտների աշխատանքները: Կա-րող է օգտակար լինել իրավաբան տեսաբանների, իրավաստեղծ և իրավակի-րառ մարմինների ներկայացուցիչներին, իրավունքի տարբեր հարցերով հե-տաքրքրվողներին:

ՀՏԴ 340:06  
ԳՄԴ 67

ISBN 978-5-8084-1933-9

© ԵՊՀ հրատ., 2015  
© Հեղ. խումբ, 2015

Երևան  
ԵՊՀ հրատարակչություն  
2015

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**Վիզեն Քոչարյան**

“PERINCEK V. SWITZERLAND” գործով ՄԱԲԴՈՒԻ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17 ՎՃՈՒԻ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԿՈՂՄԵՐԸ .....5

**Լևոն Գևորգյան**

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՏՅԱՆՆԵՐԻ ԶԱՐԱՇԱՀՈՒՄԸ ԵՎ ՉԻՐԱԳՈՎՆ  
ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԸ .....18

**Անի Միմոնյան**

ԶԱՐԳԱՅՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ .....25

**Արթուր Վաղարշյան**

*ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ* ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ .....35

**Տարոն Միմոնյան**

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԱՆԿԱՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ  
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՐՈՇԱԿԻԱՑՄԱՆ ՀԱՄԱԼԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ  
ԴՐԱՆՈՒՄ ՆԿԱՏԵԼԻ ՈՐՈՇ ՕՐԻՆԱԶՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....56

**Ալվարո Ալեքսանյան**

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ  
ՀԱՅԱՑՔՆԵՐԸ .....68

**Նարինե Դավթյան**

*ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄ* ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ  
ԿԱՌՈՒՅԱԿԱՐԳԻ ՓՈԽԼԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ  
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ .....87

**Գևորգ Դանիելյան**

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ  
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ .....98

**Վարդան Այվազյան**

ԿՈՆՍՏԻՏՈՒՅԻՆՆԱԼԻԶՄԻ (ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ)  
ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ  
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ..... 124

**Անահիտ Մանասյան**

ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ  
ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ  
ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԻ ԻՐԱՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ ..... 140

**Արա Գաբուզյան**

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ՝ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ  
ԱՂԲՅՈՒՐ ..... 149

**Սամվել Դիլբանյան**

ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՏԱԼՍՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ՔՐԵԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ ..... 160

**Аида Искоян**

ФОРМИРОВАНИЕ И РАЗВИТИЕ ЭКОЛОГИЧЕСКОГО ПРАВА:  
МЕЖДУНАРОДНЫЕ И НАЦИОНАЛЬНЫЕ ПРЕДПОСЫЛКИ ..... 174

**Գրիգոր Բեքմեզյան**

ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ  
ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՅՄԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ ..... 190

**Բանալի բառեր՝** միջազգային իրավունք, վավերացված միջազգային պայմանագիր, ազգային քրեական օրենսդրություն, քրեական պատասխանատվություն նախատեսող նորմ, քրեական պատասխանատվության պայմաններ, իմպլեմենտացիա, ռեցեպցիա:

**Ключевые слова:** международное право; ратифицированный международный договор; национальное уголовное законодательство; норма, предусматривающая уголовную ответственность; условия уголовной ответственности; имплементация; рецепция.

**Key words:** international law; ratified international treaty; national criminal legislation; norms setting criminal responsibility; conditions of criminal responsibility; implementation; reception.

## ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՏԱԼՍՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Սամվել Դիլբանդյան  
*ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի  
ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Քրեական դատավարությունը՝ որպես գործընթաց բաժանվում է համապատասխան փուլերի, որոնք հաջորդում են միմյանց և դրանով ապահովում քրեական քաղաքականության իրականացումը: Քրեական դատավարությունը բնութագրվում է նրանով, որ այն բաժանվում է մասերի՝ մինչդատական և դատական վարույթների: Այդպիսի բաժանման հիմքում ընկած է քրեական գործերի քննության բարդությունը: Մեծամասամբ քրեական գործերով վարույթ իրականացնելու պահին հանցագործություն կատարած անձը հայտնի չի լինում կամ հայտնի լինելու պարագայում՝ պետք է ապացուցել նրա առնչությունը ենթադրյալ հանցագործությանը: Քրեական դատավարության պատմական զարգացումը ցույց է տալիս, որ ժամանակի ընթացքում փոփոխվում են դատավարության տիպերը, տեսակները և վարույթային ձևերը: Ճիշտ է, բոլոր երկրների համար քրեական դատավարության նպատակները մնում են ընդհանուր, սակայն դրանց հասնելու մեխանիզմները, պայմանավորված իրավական համակարգերի առանձնահատկությամբ, լինում են տարբեր:

Քրեական դատավարության գործող օրենսգրքի համեմատությամբ քրեական դատավարության նոր օրենսգրքի Նախագիծն /այսուհետև՝ Նախագիծ/ առանձնանում է իր փուլային վարույթային կառուցվածքով: Այդ առանձնահատկությանը հանդիպում ենք ինչպես մինչդատական, այնպես էլ դատական վարույթներում: Դատավարության յուրաքանչյուր հաջորդ փուլ իր նախորդի նկատմամբ կրում է հսկողական բնույթ:

Մինչդասական վարույթն առանձնանում է նրանով, որ վերանում է քրեական գործի հարուցման փուլը, իսկ մինչդասական վարույթն ամբողջությամբ դառնում է նախաքննություն: «Նախնական քննություն» հասկացությունը վերանում է, որովհետև հետաքննությունը դադարում է քննության ինքնուրույն տեսակ լինելուց: Փուլային փոփոխությունն նախատեսված է նաև դատական վարույթներում: Քրեական դատավարության կառուցվածքային այս փոփոխությունն էապես փոխում է դատավարական ձևը, որը նպատակ է հետապնդում ապահովել անձի իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, ինչպես նաև արդար դատական քննության արդյունավետ իրականացումը, որոնք ընկած են քրեական դատավարության հիմքում:

Նախագծով առաջին աստիճանի դատարանում իրականացվող վարույթը կոչվում է «Դատաքննությունն առաջին աստիճանի դատարանում», որն իրականացվում է երեք փուլով՝ նախնական, հիմնական և լրացուցիչ լսումների վարույթային կարգով:

Արդար դատական քննության պատշաճ իրականացման համար կարևոր են այն նախագուշակական գործողությունները, որոնք պետք է իրականացվեն մինչև դատարանում գործի ըստ էության քննությունը: Դատարանը խնդիր ունի վարույթի այս մասում վերացնել այն բոլոր խոչընդոտները, որոնք կարող են արգելք լինել գործի ըստ էության քննությանը: Այս խնդիրն առկա է քրեական դատավարության գործող օրենսգրքում, որն իրականացվում է դատական քննության նախապատրաստման փուլում: Դատավարության այս փուլը յուրահատուկ «գտիչ» է նախանական քննության և դատական քննության փուլերի միջև: Այն խնդիր ունի թույլ չտալ դատական քննության փուլ մուտքն այն քրեական գործերի, որոնցով մինչդասական վարույթում թույլ է տրվել դատավարական օրենքի այնպիսի խախտումներ, որոնք կարող են խոչընդոտել դատարանի կողմից արդարադատության իրականացմանը:

Դատավարական գրականության մեջ բազմիցս նշվել է այն մասին, որ քրեական դատավարության գործող օրենսգրքում տեղ գտած կարգավորումը չի արտացոլում դատական քննության նախապատրաստելու փուլի էությունը, քանի որ պարզ չէ նրա անմիջական խնդիրները, վարույթի առարկան և դատավարական ձևը, դատավարության մասնակիցների մասնակցության հնարավորությունը: Կարելի է փաստել, որ սրանք են այն հիմնական պատճառները, որոնք հիմք են հանդիսացել Նախագծում այս ինստիտուտի նորովի իրավական կարգավորմանը:

Քրեական դատավարության զարգացման պատմությունը ցույց է տալիս, որ սա դատավարության այն փուլերից է, որը ժամանակի ընթացքում տարբեր իրավական կարգավորման է ենթարկվել: Այսպես, նախկին գործող և ապագա քրեական դատավարության օրենսդրությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ նշված փուլում դատարանի լիազորությունները, դատավարության մասնակիցների հնարավորությունները և վարույթի դատավարական ձևը տարբեր են:

Դեռևս խորհրդային իշխանության հաստատումից հետո „Դատարանի մասին, թիվ 1 և թիվ 2 դեկրետներով հաստուկ ուշադրություն հատկացվեց մեղադրյալին դատի տալու ինստիտուտին: „Դատարանների մասին, թիվ 1 դեկրետի 3-րդ կետում սահմանվեց հետևյալը, որ դատի տալը դրվում է տեղական դատարանների վրա և դատի տալը պետք է հաստատվի տեղական դատարանի որոշմամբ<sup>1</sup>:

„Դատարանների մասին, թիվ 2 դեկրետը, որը հաստատեց օկրուգային ժողովրդական դատարանների կարգավիճակը, որոնք պետք է քննեին տեղական դատարաններին ոչ ենթակա գործերը, սահմանեց հետևյալը, որ քրեական գործերով դատի տալն իրականացվում է քննչական հանձնաժողովի կողմից՝ համպատասխան ո-

<sup>1</sup> Декрет СНК РСФСР от 24.11.1917г. „О Суде, //СУ РСФСР, 1917, N 4, էջ 50:

րոշման կայացմամբ: Եթե օկրուգային ժողովրդական դատարանի կողմից դատի տալը ճանաչվում է ոչ հիմնավոր, ապա դատարանը կարող էր վերադարձնել գործը լրացուցիչ քննության կամ հանձնել դատարանի անդամներից մեկին՝ լրացուցիչ քննության համար<sup>1</sup>: Արդեն «Դատարանի մասին» թիվ 3 Դեկրետում դատի տալու ակտն իրականացվում է միասնական դատավարական ձևով, այսինքն՝ տեղական դատարանների կողմից նախնական քննության նյութերի հիման վրա:

1923թ. ՀԽՍՀ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանվեց այն հարցերի շրջանակը, որոնք պետք է լուծվեն դատի տալու փուլում: Պետք է նշել, որ մեղադրյալին դատի տալու և դատական նիստը նախապատրաստելու գործողություններն առավել մանրամասն կարգավորվեցին ՀԽՍՀ քրեական դատավարության օրենսգրքի(1961թ.) 220-րդ հոդվածում, որում հստակ սահմանվեցին այն հանգամանքները, որոնք պետք է պարզվեին մեղադրյալի նկատմամբ դատի տալու հարցը լուծելիս:

Հետագայում ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքով (1998թ.) դատավարական այս փուլը ստացավ ավելի պարզ կարգավորում, այսինքն՝ սահմանափակվեցին դատարանի լիազորությունները և վարույթին դատավարության մասնակիցների մասնակցության հնարավորությունները: Այսպես, դատավորի կողմից միանձնյա կարգով վարույթի ընթացքի և անձի իրավունքների սահմանափակման վերաբերյալ հարցերի լուծումը, կարծում ենք, որ չի բխում մրցակցության սկզբունքից, քանի որ դատավարության մասնակիցները հնարավորություն չունեն իրենց դիրքորոշումը ներկայացնել այն հարցերի վերաբերյալ, որոնք լուծվում են դատարանի կողմից /օրինակ՝ կալանքը որպես խափանման միջոց կիրառելը կամ կալանքի ժամկետի երկարացումը/: Սա նշանակում է, որ դա-

<sup>1</sup> История законодательства СССР и РСФСР по уголовному процессу и организации суда и прокуратуры 1917-1945, Сборник документов, //Под ред. С.А. Голунского, М., 1955, էջ 40:

տարանը լուծելով այդ հարցերն իր որոշման հիմքում դնում է այն փաստական տվյալները, որոնք առկա են մեղադրական եզրակացության մեջ: Իհարկե, նման որոշում դատարանը կայացնում է այն դեպքում, երբ ուսումնասիրում է գործի հանգամանքները: Այս տեսանկյունից առավել քննադատության է արժանի դատական քննության նախապատրաստման փուլում գործող օրենսդրությամբ դատարանի կողմից այս փուլում խափանման միջոցի ընտրության հարցի լուծումը: Քրեադատավարական օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ նորմը հակասահմանադրական է, քանի որ մեղադրյալին հնարավորություն չի տալիս դատարան ներկայացնել իր նկատմամբ կիրառված խափանման միջոցի վերաբերյալ իր դիրքորոշումը: Սա միաժամանակ հակասում է նաև մարդու իրավունքների և հիմարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածին, որի համաձայն՝ «5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձեռքարկված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն, և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով»:

Այս տեսանկյունից ուշագրավ են Նախագծում տեղ գտած իրավական կարգավորումները, որոնք, մեր կարծիքով, գիտական խորը ուսումնասիրության անհրաժեշտություն ունեն: Նախագծում դատավարական այս փուլը կոչվում է «Նախնական դատալսումներ», կարծում ենք, որ այդպիսի անվանումն արդարացված է, քանի որ այս փուլում՝ կողմերի մասնակցությամբ իրականացվում է դատական վարույթ:

Նախնական դատալսումների ձևով վարույթի իրականացումը նորույթ է մեր դատավարության համար, քանի որ ինչպես նախկին,

այնպես էլ քրեական դատավարության գործող օրենսգիրքը չի նախատեսում վարույթի այնպիսի կարգ, ինչպիսին նախատեսված է Նախագծով: Առաջին անգամ դատավարական այս փուլում քննության առարկա է դառնում ապացույցների թույլատրելիության որոշման հարցը, որն առանցքային նշանակություն ունի մրցակցային դատավարության համար: Դատարանը նշված հարցը լուծում է ոչ թե միանձնյա, այլ կողմերի մասնակցությամբ, որոնք իրավունք ունեն իրենց դիրքորոշումն արտահայտել ապացույցների թույլատրելիության կապակցությամբ:

Դատավարության այս փուլի էության բնորոշման համար կարևոր է այն հարցերի շրջանակը, որոնք պետք է լուծվեն վարույթի այս մասում: Այսպես, Նախագծի 317-րդ հոդվածի համաձայն՝ նախնական դատալսումների ընթացքում քննարկման ենթակա հարցերն են՝

- 1) ինքնաբացարկի, բացարկի և վարույթին մասնակցելուց ազատելու հարցը.
- 2) վարույթի ընդդատության հարցը.
- 3) քրեական հետապնդումը դադարեցնելու և (կամ) վարույթը կարճելու հարցը.
- 4) մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հարցը.
- 5) գույքային հայց հարուցված լինելու դեպքում՝ գույքային պատասխանող ճանաչելու հարցը.
- 6) միջնորդության դեպքում՝ համագործակցության վարույթով դատաքննության հատուկ կարգ կամ համաձայնեցման վարույթ կիրառելու հարցը.
- 7) հետազոտման ենթակա ապացույցների ծավալի հարցը.
- 8) միջնորդության դեպքում՝ ապացույցների թույլատրելիության հարցը.
- 9) այլ վերաբերելի հարցեր:

Կարծում ենք, որ վերը թվարկվածների մեջ առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում այն հարցերը, որոնք տեղ չեն գտել քրեական դատավարության գործող օրենսգրքի 292-րդ հոդվածում: Ճիշտ է, քրեական դատավարության գործող օրենսգրքում առանձին չեն թվարկված այն հարցերը, որոնք պետք է լուծվեն այս փուլում, սակայն ընդունվող որոշումների տեսակները՝ վկայում են դատավորի քննարկմանը ենթակա հարցերի շրջանակը (ՀՀ քր. դատ. օր-ի 292-րդ հոդված): Նախագծում, որպես առանձնահատկություն պետք է առանձնացնել հետևյալ հարցերը՝ 1) գույքային հայց հարուցված լինելու դեպքում՝ գույքային պատասխանող ճանաչելու հարցը, 2) միջնորդության դեպքում՝ համագործակցության վարույթով դատաքննության հատուկ կարգ կամ համաձայնեցման վարույթ կիրառելու հարցը, 3) հետազոտման ենթակա ապացույցների ծավալի հարցը, 4) միջնորդության դեպքում՝ ապացույցների թույլատրելիության հարցը:

Կարևոր նշանակություն ունի այն հարցի պարզաբանումը, որ դատարանը խնդիր ունի այս փուլում լուծելու, դատարանում գործը քննելու համար ապացույցների ծավալի հարցը<sup>1</sup>: Ինչպես տեսնում ենք այս հարցն իր լուծումն է ստացել Նախագծում, որի 317-րդ հոդվածի 7-րդ կետում քննարկվող հարցերի մեջ առանձնացված է հետազոտման ենթակա ապացույցների ծավալի հարցը: Մա այն հարցն է, որը դատարանը պարտավոր է լուծել նախնական լսումների յուրաքանչյուր դեպքում:

Նախագծի իրավական կարգավորումից հետևում է, որ ապացույցների ծավալ ասելով հասկացվում է ապացույցների այն շրջա-

<sup>1</sup> Նմանատիպ հարց լուծվում էր նաև ՀԽՍՀ քր. դատ. օր-ի 223-րդ հոդվածով, համաձայն որի՝ մեղադրյալին դատի տալու վերաբերյալ դատավորի որոշումը կամ դատարանի տնօրինական նիստի որոշումը պետք է պարունակի՝ .... եզրակացություն գործը դատական նիստում քննելու համար տվյալները բավարար լինելու մասին: Ինչպես տեսնում ենք նախկին օրենսդրությամբ նախատեսված դրույթը՝ վերաբերում է հետազոտման ենթակա ապացույցների ծավալին:

նակի որոշումը, որոնք պետք է հետազոտվեն հիմնական դատալսումների ընթացքում: Նախնական դատալսումների ընթացքում քննարկման առարկա չի դառնում՝ մեղադրյալին դատի տալու համար ապացույցների բավարարության հարցը: Չնայած կարծում ենք, որ նախնական դատալսումների ընթացքում նման իրավիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ մեղադրանքի հիմքում ընկած հիմնական ապացույցները ճանաչվեն անթույլատրելի:

Նշված հարցի լուծումը նպատակ է հետապնդում ընդարձակել ապացուցողական բազան: Ապացույցների ծավալի հարցը լուծելիս կարծում ենք, որ դատարանը չի ելնում այդ ապացույցների բովանդակային հետազոտությունից, որովհետև դատավարության այս փուլի խնդիրը չէ ապացույցների բովանդակային հետազոտումը: Պատահական չէ, որ Նախագծում սահմանված է այն պարտադիր պահանջը, որ ապացույցի թույլատրելիության հարցը լուծելիս, եթե անհրաժեշտ է տվյալ կամ այլ ապացույցի բովանդակային հետազոտության, ապա այդ հարցի քննարկումը տեղափոխվում է հիմնական դատալսումների փուլ (Նախագծի 326-րդ հոդված, 2-րդ մաս): Իհարկե, այդ ապացույցի հետազոտումը կարող է կապված լինել ոչ թե բովանդակային, այլ ապացույցի ձևով բերման աղբյուրի կամ օրենքով սահմանված կարգի պահպանման հետ, կարծում ենք, որ եթե այդ հարցի պարզաբանումը ենթադրում է վկայի հարցաքննություն, ապա նման հարցաքննության հնարավորություն պետք է նախատեսել, չնայած Նախագիծը բացառում է որևէ ապացույցի հետազոտման հնարավորությունը:

Այդ կապակցությամբ ուշագրավ է ՌԴ Գերագույն դատարանի քրեական գործերով կոլեգիայի այն որոշումը, որով անօրինական ճանաչվեց առաջին ատյանի դատարանի որոշումը՝ պետական մեղադրողի միջնորդությունը մերժելու մասին, որը վերաբերում էր քննչական փորձարարության արձանագրությունը որպես ապացույց անթույլատրելի ճանաչելու վերաբերյալ պաշտպանության կողմի բերված փաստարկների ստուգման համար՝ անձին որպես

վկա հարվիրելուն: Դատարանը, նշված միջնորդության մերժման մասին կայացնելով որոշում, մասնավորապես՝ նշում է հետևյալը, որ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ փաստարկների հերքման պարտականությունը դրված է դատախազի վրա, հետևաբար կողմի միջնորդությամբ որպես վկա կարող է հարցաքննվել ցանկացած անձ, բացառությամբ այն անձանց, ովքեր ունեն վկայի իմունիտետ կամ անձեռնմխելիություն:

Դատարանն ապացույցների անթույլատրելիության հարցին անդրադառնում է այն դեպքում, եթե նման միջնորդություն ներկայացրել է կողմը: Սրանից հետևում է, որ դատարանն իր նախաձեռնությամբ իրավունք չունի այդ հարցը քննարկման առարկա դարձնել, եթե նույնիսկ ինքը հայտնաբերել է, որ ապացույցը ձեռք է բերվել օրենքի խախտմամբ: Մտավախությունն այն է, որ նախնական դատալսումները ապացույցների ծավալի, ինչպես նաև դրանց անթույլատրելի ճանաչելու հարցի քննարկման մասին, չվերաժվի հիմնական դատալսման, և դրանով անձի մեղավորության կամ անմեղության հարցը ստիպված քննարկման առարկա չդառնա:

Իհարկե, դատարանը նման իրավասությամբ օժտված է հիմնական դատալսումների ընթացքում, այսպես՝ Նախագծի 341 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Մույն հոդվածի 1-ին մասով նախատեսված միջնորդությունների հարցը քննարկելուց և լուծելուց հետո դատարանն իրավասու է իր նախաձեռնությամբ հետազոտված ցանկացած ապացույց ճանաչել անթույլատրելի՝ կայացնելով առանձին փաստաթղթի ձևով որոշում»: Կարծում ենք, որ նշված կարգավորումն արդարացված է, որովհետև ըստ ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի՝ դատարանն իրավունք չունի իր կողմից կայացվող դատական ակտի հիմքում դնել այնպիսի ապացույց, որն իր կարծիքով, ձեռք է բերվել օրենքի խախտմամբ:

Բնականաբար այն հարցերի շրջանակը, որոնք քննարկման առարկա են դառնում այս փուլում, հարց է առաջանում՝ արդյոք չի սահմանափակում դատավորի անկողմնակալությունը, այսինքն՝

մինչև դատական հիմնական լուսմները նախապես ձևավորված մոտեցում չունենալ գործի ընթացքի և էլքի մասին:

Ուշագրավ է Լ.Ե. Վլադիմիրովի այն մոտեցումը, որ «Նախնական քննության ընթացքում կայացված ակտերի ուսումնասիրությունը որոշակի համոզմունք է առաջացնում դատավորի մոտ, չնայած օրենքի այն պահանջին, որ նա չի կարող անդրադառնալ անձի մեղավորությանը կամ անմեղությանը, դատավորը, ուսումնասիրելով գործի նյութերը և նախապես իմանալով, որ այդ հարցը պետք է լուծի, չի կարող գիտակցաբար, թե անգիտակցաբար գործի նյութերը չուսումնասիրի այդ տեսանկյունից»<sup>1</sup>:

Եվ քանի որ դատավորը նշված փուլում հիմնականում ծանոթանում է մեղադրանքի կողմի ներկայացված մեղադրական եզրակացությանը և այն հաստատող նյութերին, հետևաբար դժվար է ասել, որ դատավորը կանխակալ կարծիք չունի տվյալ քրեական գործի քննության էլքի նկատմամբ: Կարծում ենք, որ այս հանգամանքը հիմք ընդունելով Եվրոպական շատ երկրների օրենսդրությամբ մեղադրյալին դատի տալու և դատաքննության փուլերը առանձնացված են և իրականացվում են տարբեր դատավորների կողմից<sup>2</sup>: Նման կարգավորում նախատեսված է նաև ԱՄՆ-ի օրենսդրությամբ, այսպես՝ եթե տվյալ գործն ընդդատյա է օկրուգային կամ բարձրագույն դատարանին, ապա գործի նախնական լուսմն իրականացնում է շրջանային կամ մունիցիպալ դատարանը<sup>3</sup>:

Նախնական դատալուսմների ընթացքում լուծվում են այնպիսի հարցեր, որոնք չեն կարող ընդհանրապես կապված չլինել ապացուցողական գործունեության հետ, մասնավորապես, այնպիսի միջնորդությունների քննարկման, որոնք կապված են նոր վկաներ

կանչելու կամ առարկաներ ու փաստաթղթեր պահանջելու հետ: Դատավարական այս փուլում դատավորի ճանաչողական գործունեությունը պետք է սահմանափակվի այն հարցերի շրջանակով, որոնք պետք է պարզաբանվեն վարույթի այդ հատվածում:

Դատարանի կողմից անթույլատրելի են ճանաչվում այն ապացույցները, որոնք ձեռք են բերվել օրենքի խախտմամբ: Իրեդեն ապացույցը կամ փաստաթուղթը անթույլատրելի ճանաչելու վերաբերյալ միջնորդությունը, կարծում ենք, որ նպատակահարմար կլինի քննարկել հիմնական դատալուսմների ընթացքում, որովհետև առնաց զննման և հրապարակման դժվար է հետևություններ անել դրանց անթույլատրելիության մասին: Դատարանը պետք է հնարավորություն ունենա համոզվել, որ իրականում առկա են ապացույցն անթույլատրելի ճանաչելու հիմքերը: Եթե ապացույցի ձեռք բերման առումով օրենքի խախտումն անվիճելի է, ապա միջնորդությունը ենթակա է բավարարման դատարանի որոշմամբ:

Եթե նախնական դատալուսմների ընթացքում ապացույցը ճանաչվել է անթույլատրելի, ապա դա նշանակում է, որ մեղադրողն իրավունք չունի դատական քննության ընթացքում հղում կատարել այդ ապացույցի վրա, իսկ դատարանն՝ այդ ապացույցը դնել իր որոշման հիմքում: Նախնական դատալուսմների ընթացքում անութույլատրելի ճանաչված ապացույցը (օրինակ՝ քննչական գործողության արձանագրությունը) իր հերթին նաև հանգեցնում է դրա արդյունքում ձեռք բերված այլ ապացույցների (օրինակ՝ առարկաների կամ փաստաթղթերի) անթույլատրելիության:

Եթե ապացույցն անթույլատրելի ճանաչելու վերաբերյալ պաշտպանության կողմի միջնորդությունը դատարանը մերժել է, ապա պաշտպանն իրավունք ունի այդ միջնորդությունը ներկայացնել հիմնական դատալուսմների ընթացքում: Անթույլատրելի ճանաչված լինելու հանգամանքը, կարծում ենք, որ չպետք է բացառի կողմի հնարավորությունը, հիմնական դատալուսմների ընթացքում միջնորդություն ներկայացնել՝ քննարկելու անթույլատրելի ճանաչ-

<sup>1</sup> Владимиров Л.Е. Суд присяженных. Условия действия института присяженных и метод разработки доказательств. Харьков. 1873, էջ 61:

<sup>2</sup> А.В. Кудрявцева, В.Л. Сысков Доказательственная деятельность суда первой инстанции по уголовным делам. М., 2007, էջ 97:

<sup>3</sup> Уильям Бернам Правовая система США, 3-й выпуск, М., 2007, էջ 302-304:



ված ապացույցը թույլատրելի ճանաչելու հարցը: Նախագծում այս կապակցությամբ որևէ սահմանափակում չկա, բայց, կարծում ենք, ճիշտ կլիներ այդ հնարավորությունը օրենսդրական առանձին կարգավորման ենթարկվել, որպեսզի իրավակիրառ պրակտիկայում այդ կապակցությամբ այլ մեկնաբանություններ չլինեն: Քանի որ Նախագիծը չի բացառում այդ հնարավորությունը, հետևաբար սա նշանակում է, որ նախանական դատալսումների ընթացքում ապացույցն անթույլատրելի ճանաչելու վերաբերյալ դատարանի որոշումը վերջնական չէ, և կողմերը գրկված չեն հիմնական դատալսումների ընթացքում՝ այդ հարցին կրկին անդրադառնալու:

Իհարկե, ապացույցների անթույլատրելիության հարցի լուծման համար կարևոր է նաև խախտման բնույթը, որովհետև դրանք իրենց բնույթով կարող են լինել էական և ոչ էական: Ապացույցը թույլատրելի ճանաչելիս, պետք է հաշվի առնվեն ապացույցներ հավաքելիս՝ էական կամ ոչ էական խախտումներ թույլ տալու հանգամանքը:

Նախագծում սահմանված է նախնական դատալսումների իրականացման պարտադիր և միասնական կարգ, որը բխում է այն խնդիրներից, որոնք դրված են դատավարության այս փուլի առջև: Մասնավորապես՝ նախնական դատալսումները իրականացվում են՝ 1) դատավորի կողմից միանձնյա, 2) դոնբաց դատական նիստում, 3) կողմերի մասնակցությամբ:

Նախագծում վարույթի իրականացման այս հատվածի համար պարզեցված կամ արագացված կարգ չի սահմանվում: Դատարանը, ստանալով գործը, երկօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթ ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

Նախագիծը նաև սահմանում է առաջին դատական նիստը նշանակելու ժամկետը, այսինքն՝ վարույթը ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին որոշումը կայացնելու հետո երկշաբաթյա ժամկետում:

Դատարանը վարույթի այս փուլում դատավարության մասնակիցների մասնակցությունն ապահովելու նպատակով նշված որոշումը կայացնելուց հետո ոչ ուշ քան երկօրյա ժամկետում դատավորը հանրային մեղադրողին և վարույթի մասնավոր մասնակիցներին ուղարկում է համապատասխան որոշման պատճենը՝ բնականաբար տեղեկացնելով նրանց իրավունքների և պարտականությունների մասին, նշված փուլում լուծման ենթակա հարցերի շրջանակը և դրանց կապակցությամբ միջնորդություններ ներկայացնելու իրավունքի մասին պարզաբանում:

Նախագծում դատավարական այս փուլի օրենսդրական նորովի կարգավորումը հիմք է տալիս ասելու, որ այն ունի տեսական և գործնական կարևոր նշանակություն, իսկ առկա հիմնախնդիրներն ունեն գիտական խորը վերլուծության անհրաժեշտություն:

## ПРЕДВАРИТЕЛЬНЫЕ СУДЕБНЫЕ СЛУШАНИЯ, СОГЛАСНО ПРОЕКТУ НОВОГО УПК РА

**Самвел Дилбандян**  
*Заведующий кафедрой уголовного процесса  
и криминалистики ЕГУ, д.ю.н., профессор*

Данная научная статья посвящена институту предварительных судебных слушаний, который является нововведением в отечественном уголовном процессе. Данный этап производства не был предусмотрен ни в предыдущем, ни в действующем УПК РА.

Впервые на данном этапе судопроизводства рассматривается вопрос о допустимости доказательств, что имеет важное значение с точки зрения обеспечения состязательности. Суд решает данный вопрос не в одиночку, а при участии сторон, которые вправе представить свою позицию относительно допустимости тех или иных доказательств.

Важное значение имеет то обстоятельство, что в ходе судебных слушаний суд решает вопрос о пределах доказывания и о допустимости доказательств.

PRELIMINARY COURT HEARINGS BY THE NEW DRAFT  
CODE OF CRIMINAL PROCEDURE

Samvel Dilbandyan  
*Head of the YSU Chair of Criminal Procedure and Criminalistics,  
Doctor of Legal Sciences, Professor*

The Article is dedicated to the preliminary court hearings. It is a new institution in our criminal procedure, as it is not set out neither in the acting, nor in the previous Codes. For the first time it has been set out in the Draft.

It is the first time that the issue of the admissibility of evidence becomes a subject of examination during this stage of proceedings. This regulation has a crucial role for adversarial proceedings. The examination of the admissibility of the evidence becomes a subject of examination by the court with participation of all interested parties, who are entitled to express their position about the problem.

It is important to specify, that during this stage the court has to decide the scope of evidentiary material and the issues related to the admissibility of evidence, which will be vital for further trial.

**Բանալի բառեր՝** նախնական դատական լսումներ, քրեական դատավարություն, նախագիծ, ապացուցման սահման, ապացույցների թույլատրելիություն, դատարան:

**Ключевые слова:** предварительные судебные слушания, уголовный процесс, проект, пределы доказывания, допустимость доказательств, суд.

**Key words:** preliminary court hearings, criminal proceedings, draft, scope of evidence, admissibility of evidence, court.

ФОРМИРОВАНИЕ И РАЗВИТИЕ ЭКОЛОГИЧЕСКОГО  
ПРАВА: МЕЖДУНАРОДНЫЕ И НАЦИОНАЛЬНЫЕ  
ПРЕДПОСЫЛКИ

Аида Искоян  
*Профессор кафедры гражданского процесса ЕГУ,  
кандидат юридических наук*

Для современного этапа развития человеческой цивилизации характерно наличие глобальных проблем, в основе которых лежит все возрастающая взаимозависимость государств, когда действия одной или нескольких составляющих международного сообщества не может не вызвать определенные сдвиги в состоянии всей системы международных отношений. Одной из таких проблем является проблема сохранения экологического баланса в глобальном масштабе.

В докладе, подготовленном экспертами Программы ООН по окружающей среде – (ПРООН) и посвященном оценке состояния окружающей среды планеты Земля за десятилетия, прошедшие после Стокгольмской конференции ООН по проблемам окружающей человеком среды в 1972г., указывалось, что, несмотря на значительное повышение уровня научных знаний по вопросам охраны окружающей среды, эффективность природоохранных мероприятий возрастает более медленными темпами. Опыт показывает, что политический характер играет первостепенную роль в решении глобальных проблем окружающей среды, что многие существующие национальные, региональные и международные институты не обладают достаточной эффективностью и, что, достижение целей международного природоохранения возможно только в условиях прочного мира, безопасности и стабильности.<sup>1</sup>

Проблема охраны окружающей среды средствами

<sup>1</sup> The World Environment, 1972-1982, Dublin, 1982, p.630.